ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

2 ապրիլի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

45
(2895)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

1 ՕՐՈՒՄ 2 ԴՐԱՄԱՇՆՈՐՀ՝ «ՖԵՅՔԵՐԻ» ՊՈԱԿ-ԻՆ



ՀՀ վարչապետի աշխատակազմ	ԴՄ01	«Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ	00257466	19/01/2024
ՀՀ վարչապետի աշխատակազմ	ԴՄ02	«Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ	00257466	19/01/2024

01/2024	ԴՄ	Դրամաշնորհ	731763100	731763100
01/2024	ԴՄ	Դրամաշնորհ	16500000	16500000

ՀՀ վարչապետի աշխատակազմը «Հանրային կապերի եւ տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ին, որը հայտնի է, որպես «ֆեյքերի» ՊՈԱԿ, 2024 թվականին մեկ օրվա ընթացքում 2 անգամ դրամաշնորհային ծրագրով գումար է փոխանցել: Առաջին դրամաշնորհի արժեքը կազմել է 731 մլն 763 հազար դրամ, իսկ երկրորդինը՝16 մլն 500 հազար դրամ:

Բանն այն է, որ այդպես էլ անհասկանալի է, թե ինչու պետք է այդ ՊՈԱԿ-ը այդպիսի մեծ գումարներ ստանա պետբյուջեից, երբ, բացի Նիկոլ Փաշինյանի անձնապաշտությունից, ֆեյքերով ընդդիմախոսների վրա հարձակումից, ոչինչ հայտնի չէ նրանց գործունեության մասին հանրային գիտակցության մեջ:

Սեփական վրդովմունքը կեղծ էջերի միջոցով եւ լուտանքների տեսքով լցնում են հանրային դեմքերի անձնական էջերում՝ վիրավորելով անձի պատիվն ու արժանապատվությունը, անգամ թիրախավորելով արտաքին տեսքն ու հագուստը:

Պետական բյուջեից միլիոններ ստացող այս ՊՈԱԿ-ից ոչ մի անգամ օգտակար, հայրենանպաստ ոչ մի գործողություն չտեսանք, նույնիսկ պաշտոնական ամփոփոգրերի տեսքով: Ըստ երեւույթին, ամփոփումները գործադիրի ներքին լսարանի համար են, երբ կառավարության գլխին զեկուցվում են ֆեյքերի «հաղթանակների», «գրոհների» կամ «տակտիկական նահանջների» մասին:

Գուցե հենց «Հանրային կապերի եւ տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ն է Փաշինյանին միտք տվել էժանագին վերլուծություններով զբաղվել համաշխարհային «Տիկ-Տոկ»-ում եւ իր հետ միասին համացանցային այդ հարթակ քարշ տալ ՔՊ-ականներին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝Նիկոլ Փաշինյանն առաջիկայում կրկին փակ հանդիպում է նախատեսում ունենալ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորների հետ: Օրակարգում կրկին առաջիկայում սպասվող սահմանազատման աշխատանքներն են լինելու եւ ԵՄ անդամակցության հարցը: Բանն այն է, որ երկու հարցերի մասով էլ դեռ շատ տարաձայնություններ կան իշխանական թեւի մեջ: ԱԺ-ում մարտի 7-ին տեղի ունեցած փակ հանդիպման ժամանակ էլ ՔՊ-ականներին շատ հարցերի շուրջ չի հաջողվել համաձայնության գալ, ուստի որոշել են, որ նման ձեւաչափով հանդիպումները շարունակական են լինելու, մինչեւ բոլոր հարցականները պարզված լինեն: Թեեւ, մյուս կողմից, ինքը՝Նիկոլ Փաշինյանը, խոստովանել է բազմիցս իր թիմի առաջ, որ ոչ մի երկու քարտեզ չկա, որ համապատասխանեն իրար. յուրաքանչյուրն ունի իրենը ու բացառիկ ռելիեֆով:

Քրեական վարույթներով նշանակված փորձաքննությունների ուշացումը պատկան մարմինները միմյանց վրա են գցում: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական փաստաթղթերից տեղեկացավ, որ գլխավոր դատախազը գրություն է ուղարկել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահին եւ հայտնել, որ իրենց ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ քննության ողջամիտ ժամկետների ձգձգումները, ի թիվս այլնի, պայմանավորված են քրեական վարույթներով նշանակված փորձաքննությունների կատարման ժամկետների ձգձգումներով: Ի պատասխան գրության՝Բյուրոյի տնօրենի՝2023 թվականի հոկտեմբերի 6-ի գրությամբ հայտնել է, որ մի շարք փորձաքննություններ սահմանված ժամկետներում չեն ավարտվել փորձագետների կողմից եզրակացություն տալու համար անհրաժեշտ ելակետային տվյալներ պահանջելու՝վարույթն իրականացնող մարմնին ներկայացված միջնորդությունների կապակցությամբ տեւական ժամանակ միջոցներ չձեռնարկելու հետեւանքով: Բյուրոյի տնօրենի հիշյալ գրությամբ ներկայացված յուրաքանչյուր դեպք դարձել է ստուգման առարկա, ուսումնասիրվել են միջնորդությունների պահանջները տեւական ժամանակով չկատարելու պատճառները: Ասել է թե՝քննիչները չեն տալիս փաստերը փորձագետներին, որոնց հիման վրա փորձաքննություններ պետք է իրականացվեն: Եւ, ահա, դատախազը հանձնարարել է ուսումնասիրել իրավիճակը, սակայն դեռ որեւէ տեղաշաժ չկա այդ ոլորտում: Փորձաքննությունները շարունակում են երկար տեւել, որոնք մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից խնդիրներ են հարուցում: Օրինակ՝մեղադրվում է մի անձ, որը փորձաքննության ընթացքում, պարզվում է, անմեղ է, բայց ստիպված է լինում այդ ընթացքում կալանքի տակ մնալ: Հիշեցնենք՝ «Ժողովուրդ» օրաթերթը դեռ 2023 թվականի փետրվարի 17-ին էր գրել (https://armlur.am/1245463/), որ փորձաքննությունների ազգային բյուրոյի ղեկավար Արգամ Հովսեփյանի գործունեությունց դժգոհ է դատախազ Աննա Վարդապետյանը, սակայն նոր կադրեր չկան՝նրան փոխարինելու:

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության՝ՀՀ կրթության՝մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը, որը սահմանում է նաեւ Ակադեմիական քաղաքի գաղափարը, հասարակության կողմից հավանության չի արժանանում: Ակադեմիական քաղաքի վերաբերյալ ցանկացած առաջխաղացում առանց աղմուկ հանող լուրերի չի անցնում: Դեռ նախորդ տարի՝ամռանը, նախարարությունը ՀՀ պետական բուհերին եւ գիտահետազոտական կազմակերպություններին մինչեւ 2024 թվականի փետրվարի 15-ը ժամանակ էր տվել՝հայեցակարգային առաջարկություններ ներկայացնելու ՀՀ պետական բուհերի խոշորացման եւ գիտահետազոտական կազմակերպությունների հետ միավորման գործընթացի վերաբերյալ: Թերեւս ոչ մի բուհ հստակ առաջարկ կամ նախագիծ այդ մասով չի ներկայացրել: «Ժողովուրդ» օրաթերթը հարցումներով դիմել է ՀՀ պետական բուհեր՝հասկանալու համար՝ինչ վերաբերմունք կա Ակադեմիական քաղաքի վերաբերյալ, արդյոք բուհերի միավորումը նրանց համար օրակարգային է, թե ոչ: Միայն երեք բուհից ստացանք պատասխան, որտեղ չկար հստակ ձեւակերպված որոշում: Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայից ստացանք ռեկտորի կողմից համալսարանի ֆեյսբուքյան էջում արված հրապարակման հղումը, որտեղ ոչ փաստացի, բայց նախարարության ծրագրին հերքող արտահայտություններ կան. «Գտնում եմ, որ Կոնսերվատորիան այլ արվեստի բուհերի հետ միավորելն առաջ կբերի մի շարք նոր խնդիրներ: Բոլոր ժամանակներում երաժշտական կրթության հարցը եղել է Հայաստանի պետական քաղաքականության առաջնահերթությունների շարքում, եւ երաժշտարվեստը մշտապես պատվով է կատարել ազգային ինքնության ամենաներկայանալիներից մեկը լինելու իր առաքելությունը:



Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԶՐՈՒՅՑ

ԱՐՑԱԽՑԻՆԵՐՆ ԻՐԱԿԱՆՈՒՄ Ի՞ՆՉ ԵՆ ՈՒԶՈՒՄ

Արցախի «Արդարություն» խմբակցության պատգամավորները նոր ծրագիր են մեկնարկել՝ «Արցախի երիտասարդության որոշիչ ձայնը»: Ծրագիրը մեկնարկել է Սյունիքի մարզից, որտեղից Արցախի ընդդիմադիր պատգամավորները երեկ են վերադարձել: ArmLur.am-ը ծրագրի մանրամասների վերաբերյալ զրուցել է Արցախի ԱԺ «Արդարություն» խմբակցության ղեկավար Դավիթ Գալստյանի հետ:

-Պարոն Գալստյան, ի՞նչ է ներկայացնում «Արցախի երիտասարդության որոշիչ ձայնը» ծրագիրը, ո՞րն է դրա նպատակը:

-Այսօր բոլորը խոսում են, թե արցախցիների համար սա պետք է անել, նա պետք է անել, բայց ոչ ոք չի հարցնում՝ արցախցիներն ինչ են ուզում: Մենք տասը մարզերում հանդիպելու ենք արցախցիների հետ, փորձելու ենք հասկանալ նրանց ցանկությունները, խնդիրները եւ ամփոփելով դրանք՝ ներկայացնելու ենք արցախցիների տեսլականը: Այն մարդիկ, որոնք, քաղաքական նկատառումներից ելնելով, խոսում են արցախցիների անունից, պետք է հասկանան՝ արցախցիներն իրականում ինչ են ուզում, այլ ոչ թե իրենց ցանկությունները վերագրեն արցախցիներին:

-Ո՞ր մարզերում են հանդիպումները լինելու:

-Ծրագիրը սկսել ենք Սյունիքի մարզից, ամեն մարզում 50 հոգու հետ ենք հանդիպում, նրանց հետ զրուցում, մտքերն ու առաջարկություններն ամփոփելով՝ փորձում ենք պարզել, թե արցախցիներն ինչ խնդիրներ ունեն այստեղ ու գտնել դրանց լուծումը: Հիմնական նպատակը հայրենիք վերադարձի մասով արցախցիների պատկերացումներն ու անվտանգային երաշխիքների առումով նրանց սպասելիքները հասկանալն է: Ըստ այդ տեսլականի՝ փորձելու ենք ճանապարհային քարտեզ կազմել, որպեսզի այդ ծրագրի շրջանակներում կարողանանք կազմակերպել հետվերադարձը:

-Պարոն Գալստյան, այս պայմաններում, երբ Ադրբեջանն ամեն ինչ անում է, որպեսզի վերացնի հայկական հետքն Արցախում, իսկ Հայաստանի իշխանություններն, առհասարակ, Արցախի թեման փակ են պահում, ինչպե՞ս եք պատկերացնում Արցախ վերադարձը:

-Դրա համար մենք չենք ցանկանում մյուսների նման մեր պատկերացումները բարձրաձայնել, ցանկանում ենք քննարկել հարցը նաեւ երիտասարդների հետ, ամփոփել դրանք ու ավելի հստակ կներկայացնենք՝ ինչպես ենք պատկերացնում դա, ինչ երաշխիքներով եւ ինչ նախապայմաններով:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՉԻ ՀԱՆՁՆՈՒՄ

ՈՐՏԵ՞Ղ Է ՍԿՍՎՈՒՄ ՀՀ ՏԱՐԱԾՔԸ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հավաստիացնում է՝ Հայաստանի կառավարությունը չի պատրաստվում Տավուշի մարզի որեւէ գյուղ հանձնել Ադրբեջանին:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն այդ մասին խոսել է Արտաշատում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախաձեռնող խմբի նիստի ժամանակ ունեցած ելույթում:

«Խաղաղության մեր օրակարգի առումով մեզ շատ հայհոյում են եւ բազում ստեր են ասում: Այդ ստերից ամենաարտահայտիչը, ըստ էության, բոլոր լրատվամիջոցներում եւ ընդդիմադիր քաղաքական գործիչների խոսույթից վերջին ամիսներին չիջնող այն արձանագրումն է, որ Հայաստանի կառավարությունը պատրաստվում է Տավուշի մարզի 4 գյուղեր հանձնել Ադրբեջանին, բայց այս խոսույթը որեւէ կապ չունի իրականության հետ:

Առիթ ունեցել եմ ասելու, այսօր էլ կասեմ, որ Հայաստանի Հանրապետությունում երբեւէ չեն եղել Կըզըլհաջըլի, Խեյրեմլի, Աշաղի Ասկիպարա, Բաղանիս-Այրում անունով գյուղեր: Ընդ որում՝ վերջինը որեւէ կերպ չի կարելի շփոթել Տավուշի մարզի Բաղանիս գյուղի հետ, որովհետեւ Տավուշի մարզում Բաղանիս գյուղ կա, որը կա, եղել է եւ միշտ կլինի Հայաստանի Հանրապետություն»,-ասել է Փաշինյանը:

Նա հավելել է, որ իր կառավարությունը երբեւէ հավակնություն չի ունեցել եւ այսօր էլ չունի նշված գյուղերի տարածքների նկատմամբ: «Սա պետք է շատ հստակ արձանագրել, առավելեւս այն պայմաններում, երբ մեր գնահատականն այնպիսին է, որ Ադրբեջանը փորձում է գտնել պատրվակներ տարածաշրջանում նոր լայնամասշտաբ պատերազմ սկսելու համար: Ես ուզում եմ, որ մենք սա շատ հստակ արձանագրենք, եւ մեր քաղաքական ուղերձն այն է, որ Հայաստանն իր ինքնիշխան, միջազգայնորեն ճանաչված տարածքից դուրս որեւէ հավակնություն չունի՝ ներառյալ Ադրբեջանի կողմից հիշատակվող գյուղերի վրա: Նաեւ ուզում եմ, որ դուք իմանաք, որ Կըզըլհաջիլի գյուղը գտնվում է Ադրբեջանի վերահսկողության տակ 100 տոկոսով: Դա այդպես է այսօր, երեկ էլ էր այդպես, 15 տարի առաջ էլ է այդպես եղել, 20 տարի առաջ էլ է այդպես եղել»,- հայտարարել է ՀՀ վարչապետը:

Նա նշել է, որ հաջորդ հարցը կարող է ծագել, իսկ եթե ՀՀ-ն հավակնություններ չունի կամ եթե այդ գյուղերի ուղղություններով կան տարածքներ, որոնք կարող են գտնվել ՀՀ վերահսկողության ներքո, ինչո՞ւ ՀՀ կառավարությունը չի համաձայնում այդ տարածքներում որոշակի կարգաբերումներ անել: «Այնպես չի, որ մենք չենք համաձայնվում, մենք մի հարց ենք դնում, ասում ենք՝ մեզ համար հարկավոր է հստակ ընդգծել, թե որտեղ է սկսվում ՀՀ տարածքը: Սա է ֆունդամենտալ հարցը, եւ ես կարծում եմ, որ մենք պետք է գնանք այս լուծումներին: Եթե Ադրբեջանը ոչ թե լայնածավալ պատերազմի առիթ է փնտրում, այլ ուզում է սահմանի ճշգրտման գնալ՝ դելիմիտացիայի, դեմարկացիայի, մենք դրան պատրաստ ենք, իսկ իմ ասած բանաձեւի կիրառումը կամ չկիրառումը մեզ հնարավորություն կտա այս հարցում կոնկրետություն մտցնել եւ հետեւություններ անել»,- ասել է Նիկոլ Փաշինյանը:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանի գլխավորությամբ տեղի է ունեցել մարզպետների հետ խորհրդակցություն: Օրակարգում ընդգրկված են եղել մի շարք հարցեր:

Նախարարությունից հայտնում են, որ նախ քննարկվել են ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց բնակարանային ապահովմանն առնչվող հարցեր: Այնուհետեւ քննարկվել են ՏԻՄ լիազորությունների նկատմամբ մարզպետների կողմից իրավական եւ մասնագիտական հսկողության իրականացման վերաբերյալ հարցեր, քանի որ ՏԿԵ նախարարության կողմից ՏԻՄ սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության արդյունքներով արձանագրվել են մի շարք թերություններ եւ բացթողումներ:

ՏԿԵ նախարարը հերթական անգամ հանձնարարել է կոշտ վերահսկողություն սահմանել սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների նկատմամբ, արձագանքել ցանկացած թերացման, անբարեխիղճ կապալառուների նկատմամբ կիրառել օրենսդրությամբ սահմանված վարչարարություն:

Նախարարը հանձնարարել է առանձնահատուկ ուշադրության կենտրոնում պահել համայնքների ղեկավարների կողմից շինարարական թույլտվությունների տրամադրման գործընթացը, եւ հատկապես խիստ վերահսկողություն իրականացնել ճանապարհամերձ գոտիներում իրականացվող շինաշխատանքների նկատմամբ, ստուգել դրանց իրավաչափությունն ու տեխնիկական նորմատիվներին համապատասխանությունը:

Քննարկվել են նաեւ մի շարք այլ հարցեր:

ԴԱՏԱՐԱՆ Է ԴԻՄԵԼ

««Դվին» հյուրանոցային համալիր» ՓԲԸ մարտի 29-ին դատական հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ու պահանջում է, որ ՀՀ վարչական դատարանը 23.02.2024 թ. ժամը 12:00-ին մեկնարկած տրանսպորտային միջոցների հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող 000 OO 01 համարանիշի օգտագործման իրավունքի աճուրդն անվավեր ճանաչի եւ ««Դվին» հյուրանոցային համալիր» ՓԲ ընկերությանը հաղթող ճանաչի: Այս մասին տեղեկանում ենք դատական տեղեկատվական համակարգից:

Նշենք, որ «Դվին» հյուրանոցային համալիրը պատկանում է Արտակ Թովմասյանին, իսկ ՓԲԸ-ի տնօրենը Ս. Պետրոսյանն է:

Հայցը մակագրվել է Վարչական դատարանի դատավոր Կարեն Զարիկյանին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՊԵԿՏ ՉԿԱ

Հայաստանը ռուսական «Միր» քարտերի սահմանափակման հետ որեւէ կապ չունի: Այս մասին ապրիլի 1-ին ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում նշեց ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Վաղարշակ Հակոբյանը:

«Դա մասնավոր ոլորտն է որոշում, եւ, եթե չեմ սխալվում, որոշ բանկեր այդ որոշումը կայացրել են, որ դադարեցրել են, եւ կան բանկեր, որ չեն դադարեցրել: Ես այստեղ չեմ ուզում որեւէ քաղաքական ասպեկտ դնել:

«Միր» համակարգը միջազգային չէ, այն գործում է սահմանափակ թվով երկրներում, եւ ուզում եմ արձանագրել, որ Հայաստանը մի երկիր է, որն ունի բանկային համակարգի մաս կազմող բանկ, որտեղ «Միր» քարտերը գործում են: Այլ բան է, որ այն մասայականությունը, որ կար 1-2 տարի առաջ, այժմ չկա: Բայց այս հարցը քաղաքական հարց չէ, տնտեսական եւ մաքուր տնտեսական ռիսկերի գնահատման հարց է. որոշումը կայացրել են բանկերը, ես ձեզ վստահեցնում եմ»,-ասաց ՔՊ-ական պատգամավորը:

ԵԿԵՂԵՑԻՆ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Թուրքիայի Սիվաս (Սեբաստիա) նահանգում գտնվող հայկական Սուրբ Աստվածածին եկեղեցին հանվել է վաճառքի: Այս մասին հայտնում է Ermenihaber-ը:

Նշվում է, որ 1915-ի Հայոց ցեղասպանությունից հետո լքված եկեղեցին տեղաբնակ Հաթիջե Աքայ անունով մեկի սեփականությունն է դարձել, որն էլ, որոշելով վաճառել այն, դիմել է անշարժ գույքի գործակալություն:

Անշարժ գույքի գործակալն էլ թուրքական «DHA» լրատվական գործակալության հետ զրույցում հայտնել է, որ եկեղեցին վաճառելու հարցում խոչընդոտներ չկան:

«Կա սեփականության վկայական, եւ չկան խոչընդոտներ վաճառքի հարցում: Եկեղեցին 1-ին աստիճանի պահպանվող տարածք է եւ գտնվում է պաշտպանության ներքո: Այսօրվանից ի վեր այն հանել ենք վաճառքի եւ դրա դիմաց ուզում ենք 16 մլն լիրա (շուրջ 500,000 դոլար):

Նշենք, որ եկեղեցին գտնվում է Գյոյդյուն գյուղում եւ կառուցվել է 19-րդ դարում: Այն 2012-ին գրանցվել է որպես 1-ին խմբի պահպանություն պահանջող մշակութային անշարժ գույք:

Սրբատաշ քարերով կառուցված հայկական եկեղեցու ներքին եւ արտաքին պատերին փորագրված են խաչի պատկերներ:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐԳԵՆՏԻՆԱ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ՝ Ա. ՄԻՐԶՈՅԱՆԻ ՀԵՏ

Արգենտինյան Todos Noticias հեռուստատեսության եթերում եւ առցանց հրապարակվել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հետ Բուենոս Այրեսում նկարահանված հարցազրույցը:

Այս մասին տեղեկացրել է ՀՀ ԱԳՆ մամուլի խոսնակ Անի Բադալյանը:

Նախարար Միրզոյանն անդրադարձ է կատարել Հայաստանի եւ Արգենտինայի միջեւ համագործակցության ընդլայնման հեռանկարներին, պաշտոնական այցի ընթացքում այդ ուղղությամբ կայացած քննարկումներին, ինչպես նաեւ Հարավային Կովկասում անվտանգային իրավիճակին:

Վերջինիս համատեքստում նշվել է Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի կողմից իրականացված էթնիկ զտման, ՀՀ ինքնիշխան տարածք ներխուժումների, առկա մարտահրավերների եւ դրանց հանգուցալուծմանն ուղղված ՀՀ ջանքերի մասին:

«Բարդություններ կան, մարտահրավերներ կան, իհարկե, բայց մենք հավատում ենք, որ հնարավոր է հասնել Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագրի կնքմանը: Մեր կողմից մենք կառուցողական ջանքեր ենք գործադրում լուծումներ գտնելու համար:

Երբ մենք խոսում ենք պայմանագրի ստորագրման մասին, ապա կան կարեւոր կետեր, որոնց շուրջ պետք է լինի փոխհամաձայնություն: Դրանցից է տարածքային ամբողջականության փոխադարձ ճանաչումն ու սահմանների սահմանազատումը՝ հիմնված 1991թ. Ալմա-Աթայի հռչակագրի վրա»,- ասել է Արարատ Միրզոյանը:

Նախարար Միրզոյանը պատասխանել է նաեւ Եվրոպական միության, ՆԱՏՕ-ի հետ գործընկերությանը վերաբերող եւ այլ հարցերի:

«Մենք ժողովրդավարական երկիր ենք եւ ցանկանում ենք ամրապնդել ժողովրդավարական ինստիտուտները: Մենք տեսնում ենք, որ, օրինակ, Միացյալ Նահանգները եւ Եվրամիությունը (ԵՄ) հիմնական գործընկերներն են: Մենք նաեւ տեսանք, որ ԵՄ-ն պատրաստ էր քաղաքացիական առաքելություն ուղարկել, եւ սահմանին իրավիճակը զգալիորեն բարելավվեց, նրանց ներկայությունը մեծապես նպաստում է տարածաշրջանի եւ Հայաստանի մի մասի խաղաղությանը»,- ասել է Միրզոյանը:

Ըստ նախարարի՝ Ռուսաստանը խաղաղության երաշխավորներ էր ուղարկել 2020 թվականին՝ Լեռնային Ղարաբաղում անվտանգության վերահսկման համար, սակայն տեղի են ունեցել բազմաթիվ հարձակումներ Հայաստանի սահմանի վրա:

«Անվտանգության այն մեխանիզմները, որոնք մենք ունեինք մի քանի տասնամյակ շարունակ, չաշխատեցին: Այդ իսկ պատճառով մենք պետք է խնդրեինք, որ Եվրամիությունը գար ու դիտարկեր իրավիճակը: Այժմ մենք խորացնում ենք տնտեսական եւ քաղաքական հարաբերությունները Բրյուսելի եւ Վաշինգտոնի հետ: Ես դա շրջադարձ չէի անվանի, մենք փորձում ենք ապահովել մեր անվտանգությունը, եւ դրա համար տեսնում ենք, որ լավ գործընկերներ կան Արեւմուտքում»,- ասել է Միրզոյանը:

Նրա խոսքով՝ այն խնդիրները, որոնք կան Ռուսաստանի հետ հարաբերություններում, անհնար է թաքցնել:

«Ինչ վերաբերում է ՆԱՏՕ-ին անդամակցելու մտադրությանը, ապա ոչ: Դա այն կետը չէ, որն այսօր Հայաստանի օրակարգում է: ԵՄ-ի դեպքում կարող եմ ասել, որ հայերն իսկապես ունեն եվրոպական ձգտումներ, եւ կցանկանայի մեջբերել ՀՀ վարչապետի խոսքերը. «Հայաստանը պատրաստ է մոտ գտնվել ԵՄ-ին այնքան, որքան ԵՄ-ն դա հնարավոր է համարում»»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀՈՒՇԱԳԻՐ

Ս.թ. մարտի 29-ին ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը աշխատանքային այցով գտնվել է Սլովենիայի Հանրապետությունում, որտեղ երկու երկրների ֆինանսների նախարարությունների միջեւ ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության եւ Սլովենիայի Հանրապետության ֆինանսների նախարարության միջեւ տեխնիկական համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝Հուշագիր): Հանդիպման ընթացքում նախարարները ընդգծել են երկու երկրների միջեւ կանոնավոր երկկողմ (միջգերատեսչական) համագործակցության ամրապնդման անհրաժեշտությունը, մասնավորապես՝ բյուջետային, հարկային, պետական ֆինանսների կառավարման ոլորտներում: Այս մասին տեղեկացնում են Ֆինանսների նախարարությունից:

Հուշագրով ստանձնած պարտավորություններին համապատասխան՝ պայմանավորվածություն է ձեռք բերվել ակտիվացնել տեխնիկական եւ մասնագիտական գիտելիքների մասով փորձի փոխանակումը, ինչպես նաեւ տեղեկատվության փոխանակումը կարողությունների զարգացման այնպիսի ուղղություններով, ինչպիսիք են՝ քաղաքականությունների մշակում, որոշումների կայացման գործընթացների արդյունավետություն, ոլորտի օրենսդրության կատարելագործում եւ այլն:

Նշյալ ուղղություններով համագործակցությունը նախատեսվում է իրականացնել նախարարությունների աշխատակիցների ճանաչողական այցերի, վերապատրաստման ծրագրերին եւ սեմինարներին, աշխատաժողովներին եւ ֆորումներին մասնակցության տեսքով:

Այցի շրջանակում նախարարի գլխավորած պատվիրակությունն այցելել է նաեւ Լյուբլյանայի Ֆինանսական զարգացման կենտրոն (CEF), որտեղ կազմակերպության ղեկավարության հետ քննարկվել են ՀՀ ֆինանսների նախարարության՝ որպես տվյալ ոլորտի գիտելիքների ու փորձառության լավագույն ինստիտուտի համագործակցության հնարավորությունները կարողությունների խթանման համատեքստում: Պայմանավորվածություններ են ձեռք բերվել վերջինիս զարգացման ու արդիականացման ճանապարհային քարտեզի մշակման նպատակով խորհրդակցությունների անցկացման վերաբերյալ:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ԵՆ ՀԱՆԴԵՍ ԵԿԵԼ

ԱԺ ընդդիմադիր «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունների պատգամավորները ՀՀ սահմանազատման եւ սահմանագծման հարցերով ԱԺ հրատապ նիստ հրավիրելու նախաձեռնությամբ են հանդես եկել: Այս մասին Ar2Lur.a2-ին հայտնեց «Հայաստան» խմբակցության քարտուղար Արծվիկ Մինասյանը :

Ընդդիմադիրներն առաջարկում են, որ հրատապ նիստին զեկույցով հանդես գան փոխվարչապետ, սահմանագծման եւ սահմանազատման աշխատանքներով զբաղվող հայ-ադրբեջանական հանձնաժողովի աշխատանքների համակարգող Միհեր Գրիգորյանը եւ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը:

Նիստը տեղի կունենա ապրիլի 9-ին մեկնարկող քառօրյայի հենց առաջին հիմնական նիստին, այսինքն՝ երեքշաբթի՝ ժամը 2.30-16.00-ին:

«ՌԻԲՈԿ» ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐ

ՈՐՈՇՈՒՄԸ ԿԱՅԱՑՎԵԼ Է ՕՐԵՆՔԻ ԽԱԽՏՄԱՄԲ

Ըստ Գլխավոր դատախազության 2023 թվականի տարեկան հաշվետվության տվյալների՝ Երեւան քաղաքի Տիգրան Պետրոսյան 44/2 հասցեի հողամասերի («Ռիբոկ» մարզահամալիր) առնչությամբ Քննչական կոմիտեում քննվող քրեական վարույթի շրջանակում ձեռք բերված տվյալների հիման վրա՝ Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 2003 թվականի մարտի 27-ին տրված իրավունքի պետական գրանցման թիվ 1632045 վկայականի համաձայն՝ 6452.88 քմ մակերեսով հողամասի նկատմամբ գրանցվել է Ա.Գ.-ի սեփականության իրավունքը, որպիսի գրանցման հիմքում, ըստ նույն վկայականում կատարված գրառման, դրվել է Հողային օրենսգրքի 118-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջը: Մինչդեռ քաղաքացի Ա.Գ.-ի՝ սեփականության իրավունքի գրանցման պահին նշված հողամասը, ըստ ստացված տեղեկատվության, հանդիսացել է այգի եւ, որպես Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված օտարման ոչ ենթակա հողամաս, ենթակա չի եղել օտարման: Բացի այդ, Երեւանի քաղաքապետի՝ 2006 թվականի ապրիլի 5-ի թիվ 477-Ա որոշմամբ՝ Ա.Գ.-ին որպես ընդլայնում առանց հրապարակային սակարկությունների, ուղղակի վաճառքի ձեւով օտարվել է 850 քմ մակերեսով հողամաս: Դրա հիման վրա կողմերի միջեւ 2006 թվականի ապրիլի 29-ին կնքվել է վերոնշյալ հասցեի հողամասը ուղղակի վաճառքով՝ 3 մլն 845 հազար 400 դրամով օտարելու վերաբերյալ պայմանագիր:

Մինչդեռ, 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի համաձայն՝ ընդլայնման ձեւով կարող է օտարվել միայն այն հողամասը, որը հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել (տրամադրել) հրապարակային սակարկությունների միջոցով: Երեւանի քաղաքապետի՝ 2019 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 03/07-85844Հ գրության ուսումնասիրությամբ պարզվել է, որ Երեւանի քաղաքապետի 2006 թվականի ապրիլի 5-ի թիվ 477-Ա որոշմամբ լրացուցիչ տրամադրված հողամասը կարող էր դառնալ հրապարակային սակարկությունների առարկա, ինչից հետեւում է, որ նշված հողամասը ընդլայնման կարգով հատկացնելու մասին Երեւանի քաղաքապետի որոշումը կայացվել է օրենքի խախտմամբ: Բացի այդ, Երեւանի քաղաքապետի մեկ այլ որոշմամբ Ա.Գ.-ին կրկին որպես ընդլայնում տրամադրվել է 610.0 քմ մակերեսով հողամաս: Այնուհետեւ Երեւանի քաղաքապետի 2014 թվականի թիվ 3887-Ա որոշմամբ նշված որոշման մեջ կատարվել է փոփոխություն, եւ 610.09 քմ մակերեսով հողամասը փոխարինվել է 535.19 քմ մակերես հողամասով: 2014 թվականի նոյեմբերի 5-ին կնքվել է 535.19 քմ մակերեսով հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր: Կառավարության՝ 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի համաձայն՝ ընդլայնման նպատակով հողամաս կարող է տրամադրվել միայն մեկ անգամ, մինչդեռ տվյալ դեպքում Երեւան քաղաքի Տ. Պետրոսյան 44/2 հասցեում գտնվող անշարժ գույքի ընդլայնման նպատակով Երեւանի քաղաքապետի 2014 թվականի թիվ 1545-Ա եւ այն փոփոխելու վերաբերյալ 2014 թվականի թիվ 3887-Ա որոշումներով՝ հողամաս է տրամադրվել երկրորդ անգամ: Բացի այդ, Երեւանի քաղաքապետի 2019 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 03/07- 85844Հ գրության ուսումնասիրությամբ պարզվել է, որ Երեւանի քաղաքապետի 2014 թվականի թիվ 1545-Ա որոշմամբ լրացուցիչ տրամադրված հողամասը կարող էր դառնալ հրապարակային սակարկությունների առարկա: Այսինքն՝ Երեւանի քաղաքապետի որոշումը կայացվել է օրենքի խախտմամբ: Դատախազությունն ուսումնասիրության արդյունքներով Վարչական դատարան է ներկայացրել է 3 հայց Երեւան քաղաքի Տիգրան Պետրոսյան 44/2 հասցեի հողամասերը պետությանը վերադարձնելու նպատակով:

ՍՏԱՏՈԳԻՉ Է

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Դատախազության տարեկան հաշվետվության վիճակագրական տվյալներից ակնհայտ է դառնում, որ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում արձանագրվել է ինչպես թմրամիջոցների ապօրինի շրջանառության, այնպես էլ դրանց իրացման նպատակով շրջանառության դեպքերի աճ, որն առանձին տարածքներում գերազանցում է 100 կամ նույնիսկ 300 տոկոսը:

Մարզերում, ի տարբերություն Երեւան քաղաքի, դեպքերը համեմատաբար քիչ են, ինչը պայմանավորված է առավելապես բնակչության թվակազմով եւ կենտրոնացվածությամբ: Առանձնահատուկ ուշադրության են արժանի Երեւան քաղաքի Արաբկիր, Շենգավիթ, Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանները, որտեղ, նախորդ տարվա համեմատությամբ, էականորեն ավելացել է ինչպես թմրամիջոցների ապօրինի շրջանառության, այնպես էլ դրանց իրացման նպատակով շրջանառության դեպքերի թիվը: Մարզերում դեպքերի դինամիկ աճը պահպանվում է հատկապես Շիրակի եւ Արմավիրի մարզերում: Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի թվի աճի համատեքստում մտահոգիչ է նշված հանցատեսակի՝ առավելապես իրացման նպատակով ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտման ցուցանիշների նվազումը: Վիճակագրական տվյալները վկայում են, որ իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի աճին զուգահեռ՝ այդ հանցատեսակի բացահայտման ցուցանիշի նվազումը դրսեւորվել է Հայաստանի Հանրապետության գրեթե ամբողջ տարածքում: Բացահայտման առումով խիստ մտահոգիչ արդյունքներ են գրանցվել հատկապես Գեղարքունիքի մարզում (2022 թվականին գրանցվել է բացահայտման 88.2%, 2023 թվականին՝ 20.5%, իսկ 2021 թվականին գրանցվել է բացահայտման 100 %-անոց արդյունք): Վայոց ձորի մարզում 2022 թվականին գրանցվել է բացահայտման 75% արդյունք, 2023 թվականին՝ 22,2%, իսկ 2021 թվականին գրանցվել է բացահայտման 100%-անոց արդյունք: Տավուշի մարզում 2022 թվականին գրանցվել է բացահայտման 100%-անոց արդյունք, 2023 թվականին՝ 50%:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԱՃ

Հայաստանում 2023 թվականին ընտանիքում բռնության արձանագրված դեպքերն աճել են 151-ով կամ 42 տոկոսով. եթե 2022 թվականին արձանագրվել էր նման 357 դեպք, ապա 2023 թվականին՝ 508:

Այս մասին տեղեկացանք Գլխավոր դատախազության 2023 թվականի գործունեության մասին հաղորդումից:

«2021 թվականին արձանագրվել էր ընտանիքում բռնության 500 դեպք: 2023 թվականին արձանագրված 508 դեպքից 308-ը կամ 61 տոկոսը կատարվել են ամուսնու կողմից կնոջ նկատմամբ (նախորդ տարվա համեմատ՝ ցուցանիշը նվազել է 5-ով. 2022 թվականի նույն ցուցանիշը կազմել էր 66 տոկոս)»,- ասված է դատախազության 2023 թվականի գործունեության մասին հաղորդման մեջ:

Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է ընտանիքում սպանության դեպքերի նվազում. արձանագրվել է նման 3 դեպք, իսկ նախորդող երկու տարիներին արձանագրվել էր ընտանիքում սպանության 4 դեպք, ընդ որում՝ 2022 թվականին արձանագրված 4 դեպքն էլ կատարվել էր ամուսնու (այդ թվում՝ նախկին) կողմից կնոջ նկատմամբ, 2023 թվականին արձանագրված 3 դեպքից 2-ն է կատարվել ամուսնու կողմից կնոջ նկատմամբ:

«Ընտանիքում առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու դեպքերի թիվը 8-ն է այն պարագայում, երբ 2022 թվականին նման դեպք չէր արձանագրվել, իսկ դրան նախորդող տարում նման 1 դեպք էր արձանագրվել: Ընտանիքում բռնության դեպքերի գերակշիռ մասը ֆիզիկական ներգործության (ծեծի կամ բռնի այլ գործողությունների) դեպքեր են: Բացառություն չի կազմել նաեւ 2023 թվականը. արձանագրվել է նման 372 դեպք նախորդ տարվա 249-ի դիմաց. դեպքերն աճել են 123-ով կամ 49.4 տոկոսով»,- նշված է գլխավոր դատախազության տարեկան հաղորդման մեջ:

ԿՈՌՈՒՊՑԻԱՆ՝ ԹՎԵՐՈՎ

Հայաստանում 2023 թվականի ընթացքում կոռուպցիոն հանցագործություններ կատարելու համար Հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթներով դատի է տրվել 152 պաշտոնատար անձ (2022 թվականին՝ 63): Այս մասին տեղեկացանք Գլխավոր դատախազության 2023 թվականի գործունեության մասին հաղորդումից:

«Նշված անձինք, ըստ բնագավառների եւ զբաղեցրած պաշտոնների, հանդիսացել են ԱԺ նախկին 1 պատգամավոր, պատգամավորի 1 թեկնածու, ՀՀ բնապահպանության նախկին 1 նախարար, նախկին 1 դեսպան, տեղական ինքնակառավարման մարմնի 33 պաշտոնատար անձ, այդ թվում՝ Երեւանի նախկին 1 քաղաքապետ, Երեւանի նախկին 1 փոխքաղաքապետ, Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի 1 պաշտոնակատար, ՀՀ ՊԵԿ 5 պաշտոնատար անձ, ՀՀ քննչական կոմիտեի 3 պաշտոնատար անձ, ՀՀ ոստիկանության 36 աշխատակից, այդ թվում՝ նախկին 1 ոստիկանապետ, ՀՀ ՊՆ եւ ՋՈՒ 37 պաշտոնատար անձ եւ այլն»,- ասված է գլխավոր դատախազության հաղորդման մեջ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 29-ից ապրիլի 1-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 197 դեպք, որից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀՐԴԵՀԻՑ ՄՈԽՐԱՑԱԾԸ

Մարտի 29-ին Նոյեմբերյան համայնքի Զորական գյուղում՝ խորհրդային տարիների անասնագոմին մոտ գտնվող տնակում, հրդեհ է բռնկվել, որի մեջ ժամը 15:00-15:40-ի սահմաններում այրվել-մոխրացել է 1970թ. ծնված Սուրեն Մելքումյանը: Նա Զորական գյուղում հաստատվել էր մոտ 3 ամիս առաջ, անցած տարվա աշնանը բռնագաղթել էր Արցախից, սկզբում հաստատվել Բերդ համայնքում, որտեղից վերաբնակվել էր Զորականում: Զորականից տեղեկացա, որ Սուրեն Մելքումյանն ամուսնալուծված էր, կնոջից եւ երկու աղջիկներից բաժան էր ապրում: Ծագումով Հադրութի շրջանից Սուրեն Մելքումյանը եղել է Արցախի պաշտպանության բանակի զորացրված մայոր: Նա Զորականում զբաղվում էր հովվությամբ, արածեցնում էր համագյուղացիներից մեկի ոչխարի հոտը: Զորականի վարչական ղեկավար Սուրեն Մարտիրոսյանն ասաց, որ գյուղում իրենք հոգատարությամբ են վերաբերվել Սուրեն Մելքումյանին, մարտի 29-ին նրան են հանձնել օգնության ապրանքների ծանրոց: Համագյուղացին, ում ոչխարները պահել է Սուրեն Մելքումյանը, այդ օրը Սուրենին հանգիստ է տվել: Սուրեն Մելքումյանը հակում ուներ ալկոհոլի նկատմամբ: Զորականցիները կարծում են, որ նա, իրեն տրված հանգիստը վայելելով, տնակում թեժացրել է փայտ վառող վառարանը. դա կարող էր հրդեհի պատճառ լինել: Զորականի բնակիչները եւ Նոյեմբերյանից ժամանած հրշեջները փորձել են մարել կրակը, սակայն ուշ է եղել:

ԱՆՈՐՈՇ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Շուրջ 30 տարի Իջեւանի Բերքաբեր գյուղի հողերից 850 հեկտար, որոնք գտնվում են Ջողազի լճի ձախ ափին, գտնվում են Ադրբեջանի զինուժի վերահսկողության տակ: Այդ հողերը մշակվում են ադրբեջանցիների կողմից: Իջեւան համայնքի Վազաշեն գյուղից 1400 հեկտար գտնվում է Ադրբեջանի վերահսկողության տակ կամ չեզոք գոտում: Այդ հողերի մի մասը ադրբեջանցիներն ամեն տարի մշակում են: Նոյեմբերյան համայնքի Կոթի գյուղի մոտ 1000 հեկտար հող գտնվում է Ադրբեջանի զինուժի վերահսկողության տակ: Բերդ համայնքի սահմանամերձ տարածքներից հազարավոր հեկտարներ գտնվում են Ադրբեջանի զինուժի վերահսկողության ներքո: Մոտավոր հաշվարկներով՝ Տավուշի մարզից ընդհանուր մոտ 10 հազար հեկտար գտնվում է Ադրբեջանի զինուժի վերահսկողության տակ: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել ենք, թե Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի տարածքներից ընդհանուր քանի հազար հեկտար է այժմ գտնվում ադրբեջանական զինուժի վերահսկողության ներքո: Մարզպետը պատասխանել է. «Տիրապետման մակերեսի չափը հնարավոր է բացահայտել փաստացի մարտական հերթափոխի սահմանագծի քարտեզագրման եւ գույքագրումից հետո»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ՈՐՈՇԵԼ ԳԱՂՏՆԻ ՊԱՀԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթը ստացել է ահազանգ հանրակրթական դպրոցի տնօրենի թափուր պաշտոնի հավակնորդներից մեկից: Ահազանգողը մեկն է, բայց վստահեցնում է, որ հավակնորդների գերակշիռ մեծամասնությունը՝ 85-90%-ը, առնչվում են նույն խնդրին, ինչ ինքը, բայց չեն ցանկանում բարձրաձայնել, քանի որ վախ ունեն, որ երբ ԿԳՄՍ նախարարությունը կամ փորձագիտական գնահատում իրականացնող կազմակերպությունները իմանան իրենց ով լինելը, նրանց կողմից ներկայացված դպրոցի զարգացման ծրագրերը երբեք դրական եզրակացություն չեն ստանա. նրանց հետ հաշվեհարդար կտեսնեն: Ուրեմն այսպես, 2023 թվականի փետրվարի 9-ին, ՀՀ կառավարության կողմից ընդունված N 181-Ն որոշմամբ, դպրոցի տնօրենի թափուր պաշտոնի հավակնորդը հայտարարված մրցույթի շրջանակներում լիազոր մարմնի համաձայնեցմամբ ստորաբաժանում է ներկայացնում իր կողմից մշակված՝ դպրոցի զարգացման ծրագիրը: Վերջինս էլ մրցույթին մասնակցելու մասին հայտերն ընդունելու ժամկետն ավարտվելուց հետո՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում, հավակնորդի զարգացման ծրագիրն էլեկտրոնային եղանակով ներկայացնում է մասնագիտական հանձնաժողովին:

Մասնագիտական հանձնաժողովը հավակնորդի զարգացման ծրագիրը ստանալուց հետո՝1 աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնում է փորձաքննության: Կազմակեպությունը զարգացման ծրագիը ստանալուց հետո՝10 աշխատանքային օրվա ընթացքում, իրականացնում է փորձաքննություն՝ գնահատման չափանիշների համաձայն: Գնահատման չափանիշները սահմանվել են ԿԳՄՍ նախարարության կողմից՝ՀՀ ԿԳՄՍ նախարարի 18 ապրիլի 2023 թվականի N 399-Ա հրաման: 2024 թվականի փետրվարի 12-ին հրապարակվեց ՀՀ կառավարության նոր որոշումը, ըստ որի՝ փոփոխություններ տեղի ունեցան ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձեւաչափում: Կատարված փոփոխություններն էական էին, ու հասկանալի է նաեւ, որ այս նոր ձեւաչափով մշակված զարգացման ծրագրերը հնարավոր չի լինի գնահատել ՀՀ ԿԳՄՍ նախարարի 18 ապրիլի 2023 թվականի N 399-Ա հրամանով հաստատված գնահատման չափանիշներով: Արդեն մեկ ամիս է, ինչ դպրոցի զարգացման ծրագրերը ներկայացվում են նոր ձեւաչափով, սակայն հավակներդները չեն ստանում պատասխան սահմանված 10 աշխատանքային օրերի ընթացքում: Որեւէ բան հստակ չէ: Ավելին՝ նախարարությունը չափազանց ստորացուցիչ պայմանների մեջ է դրել հավակնորդներին, հատկապես՝ նախկինում որպես տնօրեն աշխատած, որոնց ժամկետը լրացել է: Արդեն մեկ տարի է՝ բազմաթիվ դպրոցի տնօրեններ չեն ընտրվում, գործում են առանց զարգացման ծրագրի նշանակված ժամանակավոր պաշտոնակատարները: Նախարարության իրականացրած փոփոխություններից դեռ ոչ մի դպրոց օգուտ չի ստացել: Որոշ մարդիկ ասում են, որ նախարարությունը որոշել է չիրապարակել գնահատման նոր չափանիշները: Բացի այդ, այս պահի դրությամբ մյուս որոշումը ուժը կորցրած չի համարվել, եւ, փաստորեն, այն համարվում է գործող իրավական ակտ: «Ժողովուրդ» օրաթերթին դիմած անձը մեր միջոցով է փորձել ստանալ իրեն հուզող հարցի պատասխանը: Ինչո՞ւ եւ այդ ո՞ր իրավունքով է նախարարությունը որոշել գաղտնի պահել ընդունված որոշումը, խախտել ՀՀ կառավարության որոշումը եւ չներկայացնել եզրակացությունը սահմանված ժամկետում, մարդկանց պահել անորոշության մեջ: ԿԳՄՍՆ համագործակցում է զարգացման ծրագրերը գնահատող երկու կազմակերպությունների հետ՝ «Միասնական դպրոց»՝ Վահրամ Սողոմոնյան, «Կրթություն եւ համերաշխություն»՝Վահրամ Թոքմաջյան:

ՀԱՍՄԻԿ ԴԱՎԹՅԱՆ

«ՔՐՉԻ ԲԱԶԱՐ»

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է ԺԱՄԿԵՏԱՆՑ ՈՒՏԵԼԻՔ

ArmLur.am-ին ահազանգում են, որ «Հրազդան» մարզադաշտին հարակից տարածքում գործող «Հնոտիների շուկայում», առավել հայտնի որպես «Քրչի բազար», վաճառվում է ժամկետանց ուտելիք:

Ահազանգած քաղաքացին նշում է, որ նա հնություններ է հավաքում եւ հերթական այցի ժամանակ «Հնությունների շուկա»-ում նկատել է, որ ոչ սանիտարահիգիենիկ պայմաններում սնունդ է վաճառվում:

«Ես արդեն մի քանի տարի է՝հնություններ եմ հավաքում, կոլեկցիոներ եմ, եւ արդեն մի քանի տարի է գնում՝ եմ «Հրազդան» ստադիոնի հնաշուկա: Վերջին մեկ տարում այդտեղ ի հայտ է եկել բացօթյա տեղ՝ հակահիգիենիկ պայմաններով, որտեղ վաճառվում է խանութներից դուրս գրված ապրանքներ, որոնց մեջ կա կաթնամթերք, մսամթերք, մակարոնեղեն, հատիկեղեն, քաղցրավենիք, ալկոհոլային խմիչքներ»:

Քաղաքացին նշում է, որ ստուգել է այդ սննդամթերքի ժամկետները?շատերի վրա կամ բացակայում է ժամկետի մասին ինչ-որ գրությունը, կամ էլ ժամկետը արդեն անցած է մի քանի ամիս կամ տարի:

«Ես հինգշաբթի օրը որոշեցի զանգահարել սննդի անվտանգության տեսչության թեժ գիծ եւ հայտնեցի այն, ինչը տեսել եմ: Նշեցի, որ թունավոր եւ ժամկետանց սնունդ է վաճառվում, ժողովուրդն էլ, տեղյակ չլինելով, գնում է այդ սննդամթերքը: Ասացի, որ պետք է գնան եւ ստուգումներ անցկացնեն, արգելեն վաճառքը, հարկ եղած դեպքում տուգանեն, բայց ինձ պատասխանեցին, որ պետք է այդ մթերքը գնեմ, կտրոն պահանջեմ, լուսանկարահանեմ եւ ուղարկեմ իրենց, որպեսզի դրա հիման վրա տեսուչները համապատասխան գործն անեն»,- ArmLur.am-ի հետ զրույցում նշեց քաղաքացին:

Քաղաքացին ասաց, որ նա ուղղակի ահազանգում է, սննդից չի թունավորվել եւ այս ամենը ասել է նաեւ սննդի անվտանգության տեսչության թեժ գծին, որտեղից նրան պատասխանել են, որ յուրաքանչյուր դեպքում պետք է լուսանկարահանել: «Զանգահարել եմ նաեւ Պետական վերահսկողության ծառայություն, որպեսզի իրենց հայտնեմ բողոքս, բայց այստեղից էլ առաջարկեցին, որ նորից զանգահարեմ սննդի անվտանգության տեսչություն, եւ, իմ զանգի հիման վրա, արձանագրություն կազմեն եւ գնան: Իհարկե, ես չզանգեցի, որովհետեւ այդտեղից արդեն մերժել էին»:

Քաղաքացին մեզ հայտնեց, որ շատ տեղեր է դիմել այս հարցով, բայց բոլոր տեղերից էլ նույն պատասխանն են տվել. «Զանգել եմ նաեւ Շուկայի վերահսկողական ծառայության մարմնի թեժ գծին, այնտեղից էլ պատասխանեցին, որ դա իրենց ֆունկցիան չի՝ չնայած նրան, որ պարտավոր են գնալ, քանի որ այնտեղ ապօրինի շուկա է գոյացել»:

Քաղաքացու խոսքով՝ սնունդը վաճառվում է ոչ սառնարանի մեջ դրված, այլ գետնին՝ պոլիթիլենային տոպրակների մեջ փաթաթված, հակահիգիենիկ պայմաններում:

Քաղաքացին ցանկանում է իր ձայնը հանրայնացնել, այս խնդիրը լսելի դարձնել, քանի որ ոչ մի պատկան մարմին չի հետաքրքրվում այս խնդրով:

ԱՆՆԱ ՍՐԿՊԻՈՆՅԱՆ

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 27 պատահար. 2 մարդ զոհվել է, 38-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԿՈՌՈՒՊՑԻՈՆԵՐԻՑ՝ ԲԱԺՆԻ ՊԵՏ

Նախկինների ժամանակ կոռուպցիոն դեպքերի պատճառով աշխատանքից հեռացվածը պաշտոնի անցավ: ArmLur.am-ը ֆիքսել է, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համար կոռուպցիոներներին պաշտոնների նշանակելը դարձել է ապրելակերպ: Ջորջինակ՝2016 թվականին աշխատանքից հեռացվեց Նոր Նորք վարչական շրջանի քաղաքաշինության եւ հողօգտագործման բաժնի պետ Սահակ Հարությունյանը: Այդ ժամանակահատվածում լուրեր տարածվեցին, որ Հարությունյանը «մենակով» «գործ է արել» ու շինաշխատանքների թույլտվություններ է տվել նրանց, որոնց չի հասնում: Ըստ այդ օրերի մամուլի հրապարակումների՝ Հարությունյանը 1500 ԱՄՆ դոլար կաշառքի դիմաց «չէր նկատել» Գայի պողոտայի հարակից տարածքում գտնվող ապօրինի շինարարությունը: Մեր օրերում՝ ազնիվ հեղափոխականների օրոք, Սահակ Հարությունյանը նշանակվում է Արաբկիրի քաղաքաշինության եւ հողօգտագործման բաժնի պետ:

ՄԱՀԵՐԸ՝ ԲԱՆԱԿՈՒՄ

Հայաստանում 2023 թվականի ընթացքում զինծառայողների՝ ծառայության հետ կապված 54 մահվան դեպք է արձանագրվել (2022 թվականին՝32):

Այս մասին տեղեկացանք Գլխավոր դատախազության 2023 թվականի գործունեության մասին հաղորդումից:

Նշված դեպքերից՝ հակառակորդի կողմից սպանություն՝ 19, սպանություն՝3, ավտովթարից՝2, վտանգ ներկայացնող ռազմամթերքի եւ այլ նյութերի հետ վարվելու կանոնների խախտում՝ 17, անզգուշությամբ ինքնասպանության հասցնել՝ 5, ինքնասպանության հասցնել՝2, կայծակահարություն՝1, հոսանքահարում՝1, հիվանդություն՝4:

«2023 թվականի ընթացքում արձանագրվել է զինծառայողների մահվան դեպքերի 22 դեպքով կամ 69 տոկոսով աճ (2022 թվականին՝32): Նշված ցուցանիշը պայմանավորող էական գործոն է հանդիսացել Ազատ գյուղում տեղի ունեցած հրդեհի հետեւանքով 15 զինծառայողների մահվան դեպքը, ինչպես նաեւ աճ է գրանցվել հակառակորդի կողմից կատարված սպանությունների դեպքերի թվում (2022 թվականին՝14, 2023 թվականին՝19): Հաշվետու ժամանակաշրջանում ծանրության տարբեր աստիճանի մարմնական վնասվածք է ստացել 645 զինծառայող՝ նախորդ տարվա 959-ի դիմաց. նվազում է արձանագրվել 314-ով կամ 33 տոկոսով»,- ասված է հաղորդագրության մեջ: Գլխավոր դատախազության 2023 թվականի գործունեության մասին հաղորդորդման համաձայն՝ 67 զինծառայող ստացել է ծանր մարմնական վնասվածք (2022 թվականին՝ 71), 532-ը՝ միջին ծանրության, թեթեւ եւ թեթեւ վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք (2022 թվականին՝ 679), իսկ 46-ի ծանրության աստիճանը 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ պարզված չի եղել (2022 թվականին՝0):

«Վերոնշյալ 645-ից 343 կամ 53.1 տոկոս դեպքերով մարմնական վնասվածքը պատճառվել է հանցագործությունների հետեւանքով (2022 թվականին՝380-ը կամ 39.6 տոկոսը)»,- նշված է Գլխավոր դատախազության տարեկան հաղորդման մեջ:

ՆԱՄԱԿ-ՀԱՐՑՈՒՄ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱ՞Ն, ԹԵ՞ ԱՎՏՈՐԻՏԱՐԻԶՄԻ ՊԱՀՎԱԾՔ

«Դուք նո՞ւյնպես կարծում եք, որ մեր արածը խուլիգանություն է». բաղբանտարկյալ Նարեկ Սամսոնյանի բաց նամակ-հարցումը՝ Հայաստանում ԱՄՆ դեսպանին

«Քաղաքացիական գիտակցություն» ՀԿ նախագահ, AntiFake.am կայքի հիմնադիր, քաղբանտարկյալ Նարեկ Սամսոնյանը «Արմավիր» քրեակատարողական հիմնարկից բաց նամակ-հարցում է հղել Հայաստանում ԱՄՆ դեսպան Քրիստինա Քվինին, որն ամբողջությամբ ներկայացնում ենք ստորեւ.

«Տիկին դեսպան, Ձեզ գրում եմ ժողովրդավարության բաստիոնի «Արմավիր» ՔԿՀ-ից: Վստահ եմ՝ տեղյակ եք, որ ինձ եւ ընկերոջս՝ «Իմնեմնիմի» փոդքասթի համահեղինակ Վազգեն Սաղաթելյանին, Հայաստանի իշխանությունները երկու ամսով կալանավորել են բացառապես մեդիագործունեության համար: Գործի մանրամասները չներկայացնեմ, Դուք վստահաբար տիրապետում եք:

Ձեզ բաց նամակ գրելուս հիմնական պատճառը մի քանի՝ ինձ եւ հանրության զգալի հատվածի համար կարեւոր հարցերի պատասխանները ստանալն է, կուզեք՝ հրապարակային, կուզեք՝ ոչ: Տիկին դեսպան, փետրվարի 22-ին ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը Սան Ֆրանցիսկոյում տեղի ունեցած դրամահավաքի ժամանակ, արտահայտվելով ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի մասին, բառացի ասաց «that crazy son of a bitch» (թերեւս սա հայերեն թարգմանելու կարիք չունի): Նախագահ Բայդենի այս բնորոշումը լսեց եւ կարդաց ողջ աշխարհը, կամ չչափազանցնելու համար ասենք՝ միլիարդավոր մարդիկ: Նախագահ Բայդենից առաջ պակաս «պերճախոս» չէր նախագահ Թրամփը, որն էլ հայտնի էր իր հակառակորդների մասին հանրային հայհոյաբանությամբ: Մի քանի օրինակներ էլ Ձեր նախորդ նախագահի բառապաշարից՝ «stupid son of a bitch», «dumb son of a bitch», «sleeping son of a bitch», «fuck you son of a bitch», «that bitch» եւ այլն:

Հիմա, տիկին դեսպան, մենք երկրի նախագահ չենք եւ ոչ էլ ունենք հետաքրքրության այն աստիճանի 5 տոկոսը, որն ունեին Ձեր նախագահները, եւ մենք մեր մեդիագործունեությամբ ազատ ենք եղել մեր նեղ լսարանում մեր երկրի փաստացի կառավարչի մասին ասել ճիշտ նույն բանը, ինչ Ձեր գործող նախագահն ասաց միլիարդավոր լսարանի առաջ ՌԴ նախագահին, եւ դրա պատճառով կալանավորված ենք «ժողովրդավարության բաստիոնում»: Ի դեպ, մեղադրանքի տեքստում հենց այդպես էլ գրված է. «...հայհոյել են երկրի վարչապետին եւ իշխանության ներկայացուցիչներին...»: Հիմա, ստացվում է, որ «ժողովրդավարության բաստիոնի» կառավարչի համար ես, Վազգենը, Դոնալդ Թրամփն ու Ջո Բայդենը խուլիգաններ ենք, եւ հաշվի առնելով լսարանների ծավալների բացահայտ տարբերությունները, ըստ փաշինյանական ռեժիմի, Ձեր նախագահները շատ ավելի վտանգավոր խուլիգաններ են: Ելնելով վերոգրյալից՝ առաջին հարցս. տիկին դեսպան, Դուք նու՞յնպես կարծում եք, որ մեր արածը խուլիգանություն է. եթե ոչ, ապա ի՞նչ եք պատրաստվում անել այդ կապակցությամբ:

Շարադրեմ հաջորդ հարցս. վերջին տասնամյակում սոցիալական մեդիայի տարածման արդյունքում ավանդական մեդիա հարթակներին փոխարինելու են եկել նոր ձեւաչափով մեդիա պրոդուկտներ: Դրանցից ամենատարածված ձեւաչափերից մեկը փոդքասթն է, որը ենթադրում է ավելի անմիջական եւ երկար շփում լսարանի հետ: Վերոգրյալին զուգահեռ (ըստ մասնագետների պնդման)՝ նույն սոցիալական մեդիայի զարգացումը բերել է քաղաքականության հանրայնացման (popularisation), եւ դրա հետեւանքով էլ քաղաքական դիալեկտիկան ողջ աշխարհում որակական ռեգրես է ապրել: Քաղաքականության հանրայնացման հետեւանքով էլ իրենց հերթին քաղաքականությամբ զբաղվող անհատներին (հատկապես՝ իշխանություն կրողներին) հանդուրժողականության ավելի բարձր աստիճանով են կաշկանդել, իսկ ժողովրդավարություններում, հատկապես՝ «ժողովրդավարության բաստիոնում», հանդուրժողականության աստիճանը պետք է անգամներով բարձր լինի: Հիմա, մեզ՝ մեդիա գործունեությամբ զբաղվող անհատներիս, որոնց փոդքասթն արդեն մեկ տարի է՝ եթերում է, որն ունեցել է շուրջ 90 թողարկումներ եւ ավելի քանի 100 հյուր, երկու ամսով կալանավորել են իշխանության ներկայացուցիչներին եւ անձամբ վարչապետին «son of a bitch» ասելու համար: Ձեւակերպեմ հարցս. տիկին դեսպան, վարչակազմի ո՞ր տարատեսակին է հատուկ նման ամենաթողությունը, ի՞նչ եք կարծում, սա ժողովրդավարակա՞ն, թե՞ կայուն զարգացող ավտորիտարիզմին բնորոշ պահվածք է: Ո՞րն է Ձեր գնահատականը:

Եվ ձեւակերպեմ թերեւս վերջին հարցը. տիկին դեսպան, Դուք դիտե՞լ եք իմ ձերբակալության կադրերը (եթե ոչ, նամակս Ձեզ փոխանցելիս անպայման կրիչով կտրամադրեն այդ կադրերը). եթե այո, ապա կխնդրեի պատասխանել, եթե, օրինակ, Ձեր աշխարհաքաղաքական հակառակորդ երկրներից ցանկացածում նման կերպ բերման ենթարկեին որեւէ մեդիա գործչի, Դուք ինչպե՞ս կարձագանքեիք: Կարծում եմ, որ անգամ Սպիտակ տանը նրա կնոջն ընդունելության կարժանացնեին: Իսկ ինչո՞ւմ է կայանում մեր պարագայում Ձեր քար լռությունը: Չե՞ք կարծում, որ հենց այս պատճառով է նաեւ, որ լիբերալ դեմոկրատիայի արժեքային եւ գաղափարական մասը վերջին երկու տասնամյակում տոտալ ֆիասկոյի է հանդիպում:

Հ.Գ. Վստահ չեմ, որ տվածս հարցերը նույնկերպ պատասխանի կարժանան, բայց սա գրում եմ պատմության համար:

«Ժողովրդավարության բաստիոնի» «Արմավիր» ՔԿՀ-ից քաղբանտարկյալ, «Իմնեմնիմի» փոդքասթի համահեղինակ Նարեկ Սամսոնյան»

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՅՈՒՆ ԱՃ Է ԳՐԱՆՑԵԼ

Հանցագործությունների թիվը ՀՀ-ում կայուն աճ է գրանցել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ. այս մասին փաստում է ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ իրավախախտումների մասին վիճակագրությունը: Այսպիսով, 2023 թվականի հունվարին գրանցված հանցագործությունների ընդհանուր քանակը կազմել է 2 200 դեպք, այս տարի՝ 2024 թվականի հունվարին, այն աճել է՝ դառնալով 2 550 դեպք:

2024 թվականի տվյալների մեջ մտնում են 1 030 ոչ մեծ ծանրության, 769՝ միջին ծանրության, 424՝ ծանր, 327՝ առանձնապես ծանր հանցագործությունները: Հանցագործությունների ընդհանուր քանակից կատարվել է հրազենի, ռազմամթերքի գործադրմամբ 2023 թվականին 3, 2024-ին՝ 7 դեպք: Մարդու (անձի) դեմ ուղղված հանցագործությունները 2023 թվականին կազմել են 611 դեպք, 2024 թվականին՝ 681 դեպք: Հասարակական անվտանգության, հասարակական կարգի եւ բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունները 2023 թվականին աճել են 194 դեպքով: Նախորդ տարի՝ 2023 թվականի հունվարին, նշված հանցագործությունների թիվը կազմել է 746 դեպք, իսկ 2024 թվականին՝ 940 դեպք: Սեփականության դեմ ուղղված հանցագործությունները, այդ թվում՝ գույքի հափշտակման, կողոպուտի եւ գողության դեպքերը 2024 թվականին կազմել են 632՝ նախորդ տարվա 569-ի համեմատ աճելով 63-ով: Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունները թիվը կազմել է 79 դեպք, որից 31-ը՝ կեղծ փողեր կամ արժեթղթեր պատրաստելու, պահելու եւ իրացնելու մասով: Պետական իշխանության, ծառայության եւ կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը, նախորդ տարվա համեմատ, աճել են 33-ով, 2023 թվականին այս մասով կատարվել է 170 հանցագործություն, իսկ 2024 թվականին՝ 203, այդ թվում՝ պաշտոնական լիազորություններ չարաշահելու եւ անցնելու 42 դեպք, կաշառք ստանալու, տալու, կաշառքի միջնորդության մասով 22 դեպք, իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու 4 դեպք, պետական իշխանության, ծառայության եւ կառավարման կարգի դեմ ուղղված այլ հանցագործությունների 135 դեպք:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՎԵՐԱՓՈԽՈՒՄ

«ԿԱՆԱՉ»-Ը՝ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

«Կանազ» մշակույթի շենքում կհիմնվի միջազգային չափանիշներին համապատասխան երաժշտական կրթության հաստատություն՝ «Երեւան» միջազգային երաժշտական ակադեմիան, որտեղ կկազմակերպվի ինչպես Հայաստանի, այնպես էլ արտերկրի մանուկների, պատանիների եւ երիտասարդների ուսումնառությունը:

Այս մասին տեղեկացրեց Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը «Կանազ» մարզամշակութային շենքում շրջայց կատարելուց հետո:

«Տասնամյակներ շարունակ անմխիթար վիճակում մնալուց հետո այստեղ քաղաքապետարանը նախատեսում է իրականացնել հիմնանորոգման ծրագիր: Այստեղ տեղակայվելու է Երեւանի առաջին միջազգային երաժշտական ակադեմիան, որտեղ սովորելու են 6-16 տարեկան երեխաներ: Կարծում եմ, որ շենքը տալիս է հնարավորություն ստանալու մի յուրօրինակ միջավայր միջազգային մասնագետների ներգրավմամբ երաժշտական կրթության ոլորտում ավելի բարձր մակարդակի հասնելու համար: Պլանավորում ենք այստեղ տեղակայել նաեւ «Երեւան» պատանեկան սիմֆոնիկ նվագախումբը: Սա լինելու է սկզբնական կետ այն բոլոր տաղանդավոր երաժիշտ երեխաների համար, որոնք ունեն տաղանդ: Եվ այսուհետ նրանք ունենալու են նաեւ հնարավորություն հասնելու մեծ բարձունքների՝ ստանալով լավ կրթություն հենց Երեւան քաղաքում»,- ներկայացրեց Ավինյանը:

Ակադեմիան ունենալու է գործունեության երկու հիմնական ուղղություն՝ նախադպրոցական եւ դպրոցական տարիքի երեխաների համար: «Երաժշտական նախակրթարան» բաժնում ուսումնառություն կստանան 2-ից 6 տարեկան երեխաներ: 6-ից 16 տարեկան երեխաներն էլ դպրոցում հնարավորություն կունենան ստանալ երաժշտական խորացված կրթություն՝ տեսական եւ գործնական պարապմունքների միջոցով:

«Թվում է, թե շատ գեղեցիկ, տեղական հուշարձան հանդիսացող շենքը նման վերաբերմունքի չպետք է արժանանար: Երեւանի քաղաքապետարանը շատ կտրուկ որոշում է կայացրել բոլոր այդ ներդրումային ծրագրերը չեղարկել եւ բոլոր այն տեղերում, որտեղ այդ ծրագրերը չեն իրականացվել, մենք ստանձնելու ենք այդ միջավայրերը վերականգնելու պատրաստակամությունը: Սա ընդամենը օրինակներից մեկն է»,- շեշտեց քաղաքապետը:

Քաղաքապետարանից տեղեկացրին՝ ակադեմիայի լսարանների բրենդավորումն ու ձեւավորումը իրականացվելու է Երեւանի կոնցեպտի օգտագործմամբ. կլինեն 12 մայրաքաղաքների անուններով լսարաններ: Ընդհանուր միջավայրի եւ դասասենյակների ձեւավորվումը եւս իրականացվելու է Երեւանի պատկերներով, խորհրդանշող հուշարձանների, տեսարժան վայրերի, քաղաքի զարգացման գործում նշանակալի ներդրում ունեցած անձանց պատկերներով: Առանձին դասաժամեր են հատկացվելու Երեւանին ներհատուկ մշակույթին, պատմությանը, կենցաղին վերաբերող թեմաներին:

Ավինյանը եզրափակելով նշեց՝ այս տարի կիրականցվի սեյսմիկ վերլուծություն, նախագծի ստեղծում. եթե ամեն ինչ հարթ ընթանա, 2025 թվականին կսկսեն վերանորոգման աշխատանքները:

«Կանազ» մշակույթի տունը կառուցվել է 1958թ.-ին (ճարտարապետներ՝ Ս. Մանուկյան, Վ. Տոնիկյան): Գտնվում է Երեւանի Ազատության պ. 19 հասցեում: ՀՀ կառավարության 2004թ. հոկտեմբերի 7-ի հ. 1616-Ն որոշմամբ՝ ընդգրկված է Երեւան քաղաքի պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում՝ տեղական նշանակության հուշարձանի կարգավիճակով:

Մշակույթի տունը ստեղծվել է Քանաքեռի ալյումինի գործարանի (КаиА3) աշխատակիցների ազատ ժամանցի եւ ստեղծագործական ինքնագործունեության ապահովման նպատակով: Երկար տարիներ մշակույթի տանը գործել են ինքնագործ պարախմբեր, երաժշտական համույթներ, որոնցից շատերը հանրապետական եւ համամիութենական համբավ են ունեցել:

Հետխորհրդային շրջանում մշակույթի տունը առանձնացվել է գործարանից եւ հանձնվել պետգույքին, այնուհետեւ՝ Երեւան համայնքին:

2017թ.-ին շենքը ներդրումային ծրագրի դիմաց 10 տարի ժամկետով անհատույց օգտագործման է հանձնվել «Արվեստի այբուբեն» հիմնադրամին: 2024թ.-ին, պայմանագրային պարտավորությունների չկատարման հիմքով, շենքը վերադարձվել է Երեւան համայնքին:

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՍԿԶԲԻ ԽՈՐՀՈՒՐԴ ՈՒՆԻ

Զատկի տոնին ընդառաջ հավկիթներ ներկելը, նապաստակներով եւ ճուտիկներով տունը զարդարելը, թվում է, թե պարզ սովորություններ են, սակայն դրանցից յուրաքանչյուրն իր ծագման պատմությունն ունի:

Սուրբ Հարության տոնը, որը համընկնում է գարնան սկզբի հետ, նոր կյանքի սկզբի խորհուրդ ունի եւ նման խորհուրդ ունի նաեւ հավկիթը, որտեղից էլ հենց սկսվում է նոր կյանքը: Ինչ վերաբերում է ճուտիկներին կամ նապաստակներին, ապա կապակցվել են Զատկի տոնի հետ, քանի որ հեթանոսական շրջանում դրանք պտղաբերության եւ նոր կյանքի նշաններն են եղել: Վաղ քրիստոնյաները փոխ են առել նոր կյանքի իմաստը, որովհետեւ այն օգնել է իրենց հիշել Հարության եւ Հիսուսի միջոցով նոր կյանք ունենալու մասին:

Այսօր խոսելու ենք Սուրբ Հարության տոնի վերաբերյալ մի քանի հարցադրումների շուրջ.

Այդ տարի ընտանիքում մարդ է մահացել. հավկիթ ներկե՞լ, թե՞ ոչ

Եթե սովորույթի համաձայն հավկիթ չեք ներկում Զատկին, ապա իմացեք՝ որեւէ եկեղեցական կամ հոգեւոր կանոն չկա եւ ինքներդ եք որոշելու՝ ցանկանում եք հավկիթ ներկել, թե ոչ:

Ո՞վ է հաղթում հավկիթախաղի ժամանակ

Քանի որ հավկիթը խորհրդանշում է Քրիստոսի գերեզմանը, որը բացվում է, եւ Քրիստոսը դուրս է գալիս այնտեղից, հետեւաբար խաղում հաղթում է նա, ում հավկիթը կոտրվում է:

Ի՞նչ խորհուրդ ունի հավկիթի կարմիր գույնը եւ ինչու՞ են հնում միայն կարմիր ներկել

Հավկիթի կարմիր գույնը խորհրդանշում է Քրիստոսի արյունը:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՈՉ-ՈՔԻ ԱՎԱՐՏԵՑ

Հայաստանի ֆուտբոլի առաջնության 26-րդ տուրը եզրափակվեց ԲԿՄԱ-«Վեստ Արմենիա» խաղով:

Ավանի ֆուտբոլի ակադեմիայի մարզադաշտում կայացած խաղում ԲԿՄԱ-ն ոչ-ոքի (1:1) ավարտեց հանդիպումը «Վեստ Արմենիա»-ի հետ: Հանդիպման առաջին գնդակը 18-րդ րոպեին «Վեստ Արմենիա»-ից խփեց Զախար Տարասենկոն: ԲԿՄԱ-ի պատասխան գոլը հեղինակեց փոխարինման դուրս եկած Վյաչեսլավ Աֆյանը:

26-րդ տուրում «Ալաշկերտ»-ը հաղթել էր «Արարատ»-ին (2:1), «Արարատ-Արմենիա»-ն՝ «Շիրակ»-ին (0:1), ոչ-ոքի էր գրանցվել «Ուրարտու»-«Վան» (1:1), «Նոա»-«Փյունիկ» (1:1) խաղերում:

Այժմ մրցաշարային աղյուսակում երկիշխանություն է: 56-ական միավոր ունեն «Փյունիկ»-ը եւ «Նոա»-ն: 52 միավորով երրորդ տեղում «Արարատ-Արմենիա»-ն է:

5 ՄԱՐԶԻԿՈՎ ԿՄԱՍՆԱԿՑԻ

Հայաստանի ծանրամարտի տղամարդկանց հավաքականը 5 մարզիկով կմասնակցի Թաիլանդի Պհուկետ քաղաքում մեկնարկող աշխարհի գավաթի խաղարկությանը, որը վարկանիշային է Փարիզի օլիմպիական խաղերի համար:

Փաշիկ Ալավերդյանի գլխավորությամբ մրցավայր են մեկնել Անդրանիկ Կարապետյանը (89 կգ), Սամվել Գասպարյանը (102 կգ), Գարիկ Կարապետյանը (102կգ), Վարազդատ Լալայանը (+109 կգ) եւ Սիմոն Մարտիրոսյանը (+109 կգ):

Հայաստանի ներկայացուցիչներից առաջինը մրցահարթակ դուրս կգա 89 կգ քաշային Անդրանիկ Կարապետյանը: Նա պայքարի դուրս կգա ապրիլի 6-ին: Մրցման մեկնարկը 16:30-ին է:

Ապրիլի 8-ին՝ ժամը 22:00-ից, մրցահարթակ դուրս կգան 102 կգ քաշայիններ Սամվել Գասպարյանն ու Գարիկ Կարապետյանը:

Ապրիլի 11-ին մրցահարթակը կտրամադրվի գերծանր քաշային ծանրորդներին: Ժամը 19:00-ից պայքարի դուրս կգան +109 կգ քաշային Վարազդատ Լալայանն ու Սիմոն Մարտիրոսյանը:

Թաիլանդում անցկացվելիք աշխարհի գավաթի խաղարկությունը հայ ծանրորդների վերջին վարկանիշային մրցաշարն է Փարիզի օլիմպիական խաղերից առաջ:

Աշխարհի գավաթով հայ ծանրորդները լրացնում են օլիմպիական վարկանիշների համար 6 պարտադիր մրցաշարերը, որոնց պետք է մասնակցեին համապատասխան օլիմպիական վարկանիշային միավորներ վաստակելու համար:

Հայաստանը Փարիզի օլիմպիական խաղերին կմասնակցի 3 ծանրորդով, որոնց անունները դեռեւս հայտնի չեն:

Կանանց մրցաշարում Հայաստանը ներկայացուցիչ չի ունենա:

Փարիզի 33-րդ ամառային օլիմպիական խաղերը կկայանան 2024 թվականի հուլիսի 26-ից օգոստոսի 11-ը:

●Ապրիլի 16-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Մեծապատիվ մուրացկաններ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ:

ԵՂԵ´Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ՝ ինչ է միանվագ վճարը: Ինչի՞ հիման վրա է վճարվում այն:

Հասմիկ Պետրոսյան (66 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հ. Պետրոսյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ միանվագ վճարը կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո անձի կենսաթոշակային հաշվում առկա միջոցներն ամբողջապես մասնակցին միանգամից վճարելն է:

Եթե մասնակցի՝ կուտակային միջոցները հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը փոքր է հիմնական կենսաթոշակի 75 տոկոսից կամ հավասար է դրան, ապա մասնակիցն իրավունք ունի կուտակած միջոցները ստանալ միանվագ վճարների ձեւով: Բացի դրանից, եթե մասնակցի՝ կուտակային միջոցները հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը գերազանցում է հիմնական կենսաթոշակի հնգապատիկը, ապա մասնակիցը պարտավոր է կնքել հիմնական կենսաթոշակի հնգապատիկն ապահովող անուիտետի պայմանագիր, իսկ մնացած մասը նա իրավունք ունի ստանալ միանվագ վճարի տեսքով:

Բացի վերը նշվածը՝ կենսաթոշակային հաշվում առկա միջոցները միանվագ վճարի ձեւով վճարվում են նաեւ՝

1. մասնակցի՝ նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության երրորդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչվելու դեպքում,
2. մասնակցի՝ ծայրահեղ ծանր վիճակում գտնվելու եւ կենսական կարեւոր օրգանների անբուժելի ախտահարումով հիվանդ լինելու դեպքում:

Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նպաստը նշանակելու եւ վճարելու վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում նպաստի՝ ուղղակի վճարվող գումարը գրանցվում է հաջորդ ամսվա վճարման ցուցակներում:

ՎՃԱՐՆԵՐ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ եթե հասարակական կազմակերպությունը ֆիզիկական անձին կրթաթոշակ է տալիս, ապա արդյոք եկամտային հարկի պարտավորություն առաջանո՞ւմ է:

Սուսաննա Վարդանյան (53 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ համաձայն «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 18 կետի՝ նվազեցվող եկամուտներ են համարվում բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին, ասպիրանտներին, միջնակարգ-մասնագիտական ու պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատությունների սովորողներին, հոգեւոր ուսումնական հաստատությունների ունկնդիրներին պետության կողմից վճարված, ինչպես նաեւ այն կրթաթոշակները, որոնք նրանց համար նշանակում են այդ ուսումնական հաստատությունները կամ նշված հոդվածի 1-ին մասի 14-րդ եւ 15-րդ կետերում նշված կազմակերպությունները:

Այսինքն՝ հասարակական կազմակերպության կողմից ֆիզիկական անձին նշանակված կրթաթոշակը նվազեցվող եկամուտ է հանդիսանում, եւ եկամտային հարկի պարտավորություն չի առաջանում:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ավելացնենք, որ հարկային գործակալները պարտավոր են ֆիզիկական անձանց պահանջով նրանց տրամադրել հաշվարկված եւ վճարված եկամուտների, պահված հարկի գումարների վճարումների մասին տեղեկանքներ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Ճանապարհատրանսպորտային պատահարների հետեւանքով Իրանում 740 մարդ է զոհվել մարտի 14-ից ի վեր, երբ երկրում սկսել են նշել Նոուրուզը՝ իրանական արեւային օրացույցով Նոր տարին: Տարբեր վնասվածքներ է ստացել առնվազն 19 325 մարդ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	- 3 - 7 + 8 + 13
Կոտայքի լեռներ	- 3 - 6 + 8 + 11
Կոտայքի նախալեռներ	- 2 + 1 +12 + 13
Գեղարքունիք	- 3 - 6 + 6 + 9
Լոռի	- 1 + 3 +11 + 13
Տավուշ	- 1 + 2 +13 + 16
Արագածոտնի լեռներ	0 + 3 + 8 + 10
Արագածոտնի նախալեռներ	+ 3 + 6 +12 + 15

Արարատ	+ 2 + 5 +15 + 17
Արմավիր	+ 1 + 4 +15 + 17
Վայոց ձորի լեռներ	- 3 - 6 + 8 + 11
Վայոց ձորի նախալեռներ	+ 2 + 4 +15 + 17
Սյունիքի հովիտներ	+ 5 + 8 +15 + 19
Սյունիքի նախալեռներ	- 1 + 3 +11 + 15
ԼՂՀ	- 1 + 3 +10 + 14
Երեւան	+ 6 + 8 + 11 + 13

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **1.4.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*